**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՐՉԱՊԵՏ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1


**№ 01/09.1/17302-2025**

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան,

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առաջադրված թեկնածուի տվյալները և վերջինիս վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2025 թվականի N 650 - Ա

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում առաջադրել Արտակ Զեյնալյանի թեկնածությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ — Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ
ԹԵՐԹԻԿ

1. Արտակ Հայկազի Զեյնալյան
ազգանունը, անունը, հայրանունը

2., արական, 09.09.1969 թ, Երևան
սեռը, ծննդյան ամսաթիվը, ծննդյան վայրը

3. Կրթությունը

2009թ ավարտել եմ «Գլածոր» կառավարման համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը.

2002թ ավարտել եմ ՀՀ Կառավարման ակադեմիան, ունեմ պետծառայողի որակավորում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մասնագետ եմ.

1999թ ավարտել եմ Առողջապահության ազգային ինստիտուտի օրդինատուրան, վիրաբույժ եմ և առողջապահության կազմակերպիչ.

1996թ ավարտել եմ ք. Երևանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարանի Բուժական ֆակուլտետը.

1986թթ ավարտել եմ Քանաքեռի Խաչատուր Աբովյանի անվան № 84 միջնակարգ դպրոցը.

2004թ ԱՄՆ Պետ դեպարտամենտի «Միջազգային այցելուների» ծրագրի շրջանակներում մասնակցել եմ ԱՄՆ Նախագահական ընտրարշավին.

2014թ մասնակցել եմ «Արդարադատության ակադեմիայի» դասախոսների համար՝ «ՄԻԵԿ և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ամրապնդումը Հայաստանում» թեմայով դասախոսություններին:

4. Աշխատանքային գործունեությունը

17.09.2023թ Երևանի ավագանու անդամ:

12.2020թ մինչ՝ օրս, աշխատում եմ անհատ ձեռնարկատեր-իրավաբան:

15.06.2019թ-12.2020թ աշխատել եմ «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակ ՍՊԸ-ում:

17.06.2019թ-2020թ կամավոր աշխատել եմ «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունում, որպես իրավաբան:

12.05.2018թ-12.06.2019թթ աշխատել եմ Հայաստանի արդարադատության նախարար:

2017-2018թթ ՀՀ Ազգային ժողովի VI գումարման պատգամավոր:

2001-2017թթ աշխատել եմ «Հանրապետություն» կուսակցության կենտրոնական գրասենյակի ազխատակազմի ղեկավար:

2014-2017թթ աշխատել եմ անհատ ձեռնարկատեր-իրավաբան:

1998-2001թթ աշխատել եմ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ.

1986-1998թթ աշխատել եմ Միքաելյանի անվան վիրաբուժության ինստիտուտում, որպես սանիտար, բուժ եղբայր, բժիշկ:

2000-2001թթ ղեկավարել եմ «Ժողովրդագրական-Առողջապահական Հետազոտություն» ծրագիրը՝ իրականացվող ՀՀ առողջապահության նախարարության և ԱՄՆ «MAKRO internacional inc.» կազմակերպության հետ համատեղ «Ընտանիքի առողջության պահպանման հաղորդակցության ծրագիրը»՝ իրականացվող Ջոնս Հոփկինս համալսարանի Բնակչության հետ հաղորդակցման ծառայությունների Հայաստանի մասնաճյուղի հետ:

2000թ ղեկավարել եմ ՀՀ կառավարությանն առընթեր Մարդասիրական օգնության հանձնաժողովի Առողջապահության, Հումանիտար ճանապարհով ստացվող բժշկական նշանակության ապրանքների վերագնահատող հանրապետական հանձնաժողովները.

1999թ, 2003թ, 2007թ, 2017թ, 2018թ, 2021թ ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում առաջադրվել եմ պատգամավորության թեկնածու՝ համամասնական ընտրակարգով:

2009թ, 2018թ Երևան քաղաքի ավագանու ընտրություններում առաջադրվել եմ ավագանու թեկնածու:

2010թ նշանակվել եմ ՀՀ փաստաբանների պալատի Գիտա-վերլուծական կենտրոնի Սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահ:

5. Հասարակական, հանրային գործունեությունը

1993թ «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության հիմնադիր անդամ եմ:

2001թ անդամագրվել եմ «Տանիք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանն ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հասարակական խորհրդին»:

2003թ անդամագրվել եմ «Իրավաբաններն ընդդեմ խոշտանգման» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանը:

2011թ հիմնադրել եմ «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը և՝ նախագահել, մինչև՝ 2017թ ապրիլը:

2011թ-2012 թ. «Իրավունքի գերակայություն» հ/կ-ի՝ «Խոսքի ազատությու՞ն, թե դեֆամացիա-որտե՞ղ է հավասարակշռությունը» ծրագրի փորձագետ:

2012թ «Իրավունքի գերակայություն» հ/կ-ի՝ «Մարդու իրավունքների պաշտպանության՝ մենթորություն» ծրագրի փորձագետ, ստրատեգիական դատավարությունների իրականացման իրավաբան-փորձագետ:

2015թ-2017թ «Իրավունքի գերակայություն» հ/կ-ի՝ «Ճանապարհատրանսպորտային փոխհարաբերություններում Իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմի գործարկում և իրավական դաշտի բարելավում» ծրագրի փորձագետ:

2015թ-2017թ մի շարք ճանաչված և հեղինակավոր իրավապաշտպանների կողմից հիմնադրված «Արդարություն խմբի» անդամ:

2009-2011թթ աշխատել եմ «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունում՝ փորձագետ:

2016թ – համակարգել եմ «Ադրբեջանի Հանրապետության կողմից ռազմական միջամտության հետևանքով Արցախի և Հայաստանի քաղաքացիների իրավունքների պաշտպանություն» ծրագիրը և եղել փորձագետ:

2020թ –իրականացնում եմ[1] Ադրբեջանի կողմից Արցախի դեմ նախաձեռնված լայնամասշտաբ պատերազմի ընթացքում, դրան հաջորդած ժամանակահատվածում գերության մեջ հայտնված զինվորական ծառայողի և ձերբակալված քաղաքացիական անձանց, իրավունքի խախտման զոհերի իրավունքների պաշտպանություն՝ միջազգային ատյաններում, այդ թվում՝ դատական: Մեր դիմումների հիման վրա Եվրոպական դատարանը ավելի քան 100 որոշում է կայացրել միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ, որով Ադրբեջանի կառավարությանը պարտավորեցրել է, պահանջել է փաստաթղթավորված տեղեկություն՝ նրանց գերեվարման փաստի, գտնվելու վայրի, պահման պայմանների և բժշկական սպասարկման, նրանց հայրենադարձման վերաբերյալ: Միևնույն ժամանակ 09.03.2021թ Եվրոպական դատարանը մեր դիմումների հիման վրա որոշել է՝ Ադրբեջանի կողմից հայ ռազմագերիների և պահվող քաղաքացիական անձանց իրավունքների ոտնահարումների խնդրի մասին ծանուցել ԵԽ Նախարարների կոմիտեին:

2010թ դասավանդել եմ՝ Փաստաբանների դպրոցում և Փաստաբանների պալատում:

Դատական ներկայացուցչություն սկսել եմ իրականացնել 2001-2005թթ վարչական կալանքների վարույթներում, Սահմանադրական դատարանում ներկայացուցությունը սկսել եմ իրականացնել 2003թ ընտրական վեճերով:

Հեղինակել (համահեղինակ) և իրականացրել եմ տասնյակ(ավելի քան՝ 100) նախադեպային դատական ակտերի հիմքում ընկած ստրատեգիական դատավարություններ, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի, ավելի քան՝ 60 որոշումների հիմքում ընկած դիմումներ. Վարչական դատարանի մի քանի հարյուր վճիռների հիմքում ընկած հայցերի, Վճռաբեկ դատարանի տասնյակ նախադեպային որոշումների հիմքում ընկած որոշումների, Մարդու իրավունքների Եվրոպական դատարան ներկայացված և ընթացքում գտնվող, ավելի քան՝ 600 գանգատների հեղինակ ու համահեղինակ եմ[2]:

---

[1] Իրավապաշտպան Սիրանուշ Սահակյանի հետ համատեղ:

[2] https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-212965%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-200439%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-192087%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-121176%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-201739%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-168830%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-182276%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-182155%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-169756%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-181084%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-179930%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-199347%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-195059%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-173883%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-150495%22]}

Օրգանների, արյան, ոսկրածուծի և այլ հյուսվածքների դոնոր եմ:

5. Օտար լեզուների իմացությունը
ռուսերենին, ֆրանսերեն

6. Գիտական աստիճանը, գիտական կոչումը

Գիտական աստիճան և կոչում չունեմ, սակայն իմ հեղինակած տասնյակ թեզեր հաստատվել, կյանքին են կոչվել և կիրառվում են, դրանք կարող է գնահատվել, որպես առողջապահության, կառավարման, իրավագիտության ոլորտներում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ էական նվաճում:

«Մարդուն օրգանների փոխպատվաստման մասին», «Մարդու վերարտադրողության արհեստական մեթոդների իրականացման մասին», «Արյան, դրա ձևավոր տարրերի դոնորության մասին», «Բնակչության կանխարգելիչ պատվաստումների մասին», **«**Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին**»,** «Եվրոպական Միությանը ՀՀ անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» ՀՀ օրենքների նախագծերի, մի շարք գործող օրենքներում («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Լիցենզավորման մասին» և այլն) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության տասնյակ որոշումների («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»; «Դեղերի մասին» ՀՀ օրենքներից բխող), Գերատեսչական նորմատիվ (գրանցված) ակտերի, ՀՀ առողջապահության նախարարության բազմաթիվ հրամանների հեղինակ ու համահեղինակ եմ:

Գիտական մի քանի տպագրված աշխատանքների («Առողջապահության համակարգը և դրա բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում» Հայաստան 2020 զարգացման և անվտանգության ռազմավարություն, Երևան 2002 և այլն) և զեկույցների («Human Rights in the OSCE Region: Europe, Central Asia and North America, Report 2004 (Events of 2003); Annualreport on human rights in Armenia for the year of 2004 (2008, 2009, 2010) prepared by Helsinki Association»-ի) հեղինակ ու համահեղինակ եմ:

«Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի վճիռների կատարման գործընթացը. Հայաստանում դրանց կատարման խնդիրներն ու առանձնահատկությունները» աշխատության համահեղինակ եմ (Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան, Ա.Գրիգորյան.- Երևան.: Ասողիկ, 2011. 208 էջ[3]):

«Նախադեպային իրավունքն արդարադատության իրականացման գործընթացում հատոր I Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախաձեռնած դատական գործերի վերլուծություն» աշխատության

---

https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-159648%22]}

[3] https://www.osce.org/files/f/documents/5/0/78232.pdf

համահեղինակ եմ / Ա. Ղազարյան, Ա. Զեյնալյան, Տ.Մատինյան. – Վանաձոր.: 2011:, 412 էջ[4]:

«ՀՀ սահմանադրական դատարան և մարդու իրավունքների Եվրոպական դատական ներկայացված գրավոր մեկնաբանությունների (amicus curiae)» ժողովածուի համահեղինակ եմ (Գ. Մարգարյան, Ի. Փիլոյան, Ա. Զեյնալյան, Վ. Գրիգորյան, Լ. Սահակյան, Եր. Վարոսյան - Երևան.: Ասողիկ, 2012. 84 էջ):

«Զրպարտության և վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ» աշխատության համահեղինակ եմ / Ա. Ղազարյան, Ա. Զեյնալյան. – Երևան.: «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն, 2012. 53 էջ[5]:

«Զրպարտություն և վիրավորանք» լրագրողների և փաստաբանների համար ձեռնարկի համահեղինակ եմ (Ինֆորմացիայի ազատության կենտրոն, Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան - Երևան.: 2014. 46 էջ)[6]:

«Անվճար իրավաբանական օգնության կառուցակարգերը և պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում. Կարիքների գնահատում» հետազոտության համահեղինակ (Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան - Երևան.: 2015. 76 էջ)[7]:

«Գերակա հանրային շահի հիման վրա գույքի օտարումների արդյունքում խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունները» հետազոտություն (Դ. Ասատրյան, Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան - Երևան.: Իրավունքի Գերակայություն ՀԿ 2021. 146 էջ[8]):

Հեղինակել եմ «Արդարադատության ակադեմիայի» ուսումնական մի քանի մոդուլներ, այդ թվում՝ «Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի նախադեպային իրավունքը վարչական գործերով» ուսումնական մոդուլը:

7. Պետական պարգևներ և մրցանակներ

ՀՀ նախագահի 20.09.1996թ հրամանագրով արժանացել է «Արիության համար» մեդալի:

Արժանացել եմ բազմաթիվ Կառավարական, Գերատեսչական, Գերատեսչական-Միջազգային և ոչկառավարական կազմակերպությունների զանազան պարգևատրումների պատվոգրերի, շնորհակալագրերի, այդ թվում՝

2011թ «Ամալյա Կոստանյանի անվան մրցանակի»՝ սկզբունքային ու խիզախ գործունեության և քաղաքացիական հասարակության զարգացման գործում նշանակալի ներդրման համար, Տեղեկատվության ազատության մրցանակաբաշխության ժյուրիի կողմից ճանաչվել է 2006 թվականին տեղեկատվություն ստանալու իրավունքը լավագույնս կիրառած քաղաքացի, իսկ 2013 թվականին՝տեղեկատվության ազատության խախտված իրավունքի համար

[44] https://drive.google.com/file/d/10BrwNdlaj6_ahJpNpE70XJ0HAL56hLf4/view?usp=drive_link

[5] https://www.osce.org/files/f/documents/2/e/123447.pdf

[6] https://foi.am/books/13304

[7] https://drive.google.com/file/d/1lxniThSafhZ1FwxngynkXk4rQ7kqA-VY/view?usp=drive_link

[8] https://epfarmenia.am/sites/default/files/Document/Opportunities_for_the_restoration_of_mass_and_recurring_violations_of_rights_in_transitional_justice.pdf

ամենահամառ ու հետևողական պայքարող իրավապաշտպանը և արժանացել եմ Ոսկե բանալի մրցանակների:

2009թ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը՝ իրավապաշտպան գործունեության բնագավառում մեծ վաստակի համար, շնորհել է «Պալատի պատվավոր անդամի» կոչում:

2014թ Հայաստանում արևմտյան մի շարք երկրների դեսպանությունների և ԵԱՀԿ-ի գրասենյակի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում նշանակալից ջանքերի համար արժանացել եմ «2014թ Համընդհանուր իրավունքների մրցանակի»:

2016թ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան կողմից արժանացել եմ «Տարվա իրավապաշտպան» տիտղոսին:

2022թ Ֆրանսիայի Մոնպելիեի Փաստաբանների կոլեգիայի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում արժանացել եմ «Ժան-Կլոդ Բարրելի» մրցանակին:

8. Առնչությունը զինվորական ծառայության հետ

1987-1989թթ ծառայել եմ խորհրդային բանակում,

1990-1997թթ կամավոր մասնակցել եմ Հայաստանի և Արցախի սահմանների պաշտպանությանը՝ Նիկոլ-Դուման երկրապահ կամավորական ջոկատի կազմում,

1992թ վիրավորվել եմ՝ կորցրել եմ ոտքը:

9. Ընտանեկան դրությունը

| | |
|---|---|
| Մայրս | - Օֆելյա Զարզանդի Տոնայան, |
| Կինս | - Լիլիթ Արժանիկի Մուսեյան, |
| Որդիս | - Հայկ Արտակի Զեյնալյան, |
| Դուստրս | - Նանե Արտակի Զեյնալյան, |
| Դուստրս | - Մանան Արտակի Զեյնալյան, |
| Որդիս | - Վահագն Արտակի Զեյնալյան, |
| Թոռս | - Արեգ Հայկի Զեյնալյան, |
| Թոռս | - Արտակ Հայկի Զեյնալյան, |
| Թոռս | - Միքայել Հրայրի Մանուկյան, |

(թվարկել ընտանիքի անդամներին՝ ծնողներ, ամուսին (կին) երեխաներ)

26.05.2025թ

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Արտակ Հայկազի Չեյնայանը

/անուն, հայրանուն, ազգանուն/

բնակչության պետական ռեգիստրի տվյալներով հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

Այլ երկրի քաղաքացիության վերաբերյալ ԲՊՌ-ում նշում առկա չէ:

**ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության բնակչության պետական ռեգիստրի վարման բաժնի պետ Վաղինակ Նիկողոսյան**

Recoverable Signature

X

ՎԱՂԻՆԱԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Signed by: NIKOGHOSYAN VAGHINAK 1105860361

Կ. Տ.

«21» 05 2025թ.

N 421941611132369-25

Տեղեկանք
Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնին 2025թ հունիսին հավակնող թեկնածու Արտակ Զեյնալյանի մասնագիտական բարձր որակների և աշխատանքի փորձառության վերաբերյալ

03.09.2024թ «Եվրոպական Միությանը ՀՀ անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» ՀՀ օրենքի նախագծի հեղինակ և քաղաքացիական նախաձեռնող խմբի ներկայացուցիչ, նախաձեռնության կազմակերպիչ-կառավարող, խորհրդատու (հավելված 4.1.):

17.09.2023թ Երևանի ավագանու անդամ (հավելված 4.2.):

2022թ ապրիլին Բարձրագույն Դատական Խորհուրդը թեկնածությունն առաջադրել է ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավորի թեկնածու[1] (մասնագիտական աշխատանքի առնվազն 10 տարվա փորձառության հիմքով) :

2014-2017թթ, ապա՝ 12.2020թ մինչ՝ օրս, անհատ ձեռնարկատեր-իրավաբան (հավելված 4.3.):

12.05.2018թ-12.06.2019թթ Հայաստանի արդարադատության նախարար[2]:

2017-2018թթ ՀՀ Ազգային Ժողովի VI գումարման պատգամավոր[3]:

15.07.2019թ-12.2020թ իրավաբան՝ «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակ ՍՊԸ-ում:

2011թ հիմնադրել եմ «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը և՝ նախագահել, մինչև՝ 2017թ ապրիլը, ապա՝ 17.06.2019թ-2020թ կամավոր աշխատել եմ որպես իրավաբան (հավելված 4.4.):

2011թ-2012թ «Իրավունքի գերակայություն» հ/կ-ի՝ «Խոսքի ազատությու՞ն, թե դեֆամացիա-որտե՞ղ է հավասարակշռությունը» ծրագրի փորձագետ[4]:

2012թ «Իրավունքի գերակայություն» հ/կ-ի՝ «Մարդու իրավունքների պաշտպանության՝ մենթորրություն» ծրագրի փորձագետ, ստրատեգիական դատավարությունների իրականացման իրավաբան-փորձագետ:

2014թ մասնակցել եմ «Արդարադատության ակադեմիայի» դասախոսների համար՝ «ՄԻԵԿ և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ամրապնդումը Հայաստանում» թեմայով դասախոսություններին:

2010թ նշանակվել եմ ՀՀ փաստաբանների պալատի Գիտա-վերլուծական կենտրոնի Սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահ (հավելված 4.5.):

2010թ դասավանդել եմ՝ Փաստաբանների դպրոցում և Փաստաբանների պալատում:

2015թ-2017թ «Իրավունքի գերակայություն» հ/կ-ի՝ «Ճանապարհատրանսպորտային փոխհարաբերություններում Իրավական

[1] https://www.youtube.com/watch?v=8zLYjHynSF0
[2] ՀՀ Նախագահի հրամանագիր՝ 12.05.2018 ՆՀ-306-Ա, https://www.president.am/hy/decrees/item/4547/
[3] https://res.elections.am/images/doc/030517v.pdf
[4] https://www.aravot.am/2012/04/11/294408/

պաշտպանության արդյունավետ մեխանիզմի գործարկում և իրավական դաշտի բարելավում» ծրագրի փորձագետ[5]:

2015թ-2017թ մի շարք ճանաչված և հեղինակավոր իրավապաշտպանների կողմից հիմնադրված «Արդարություն խմբի» անդամ:

2009-2011թթ աշխատել եմ «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունում՝ փորձագետ:

2016թ – «Ադրբեջանի Հանրապետության կողմից ռազմական միջամտության հետևանքով Արցախի և Հայաստանի քաղաքացիների իրավունքների պաշտպանություն» ծրագրի համակարգող և եղել փորձագետ, Մարդու իրավունքների Եվրոպական դատարան է ներկայացվել շուրջ 700 քաղաքացու անունից՝ 390 գանգատ[6]:

2020թ – իրականացնում եմ[7] Ադրբեջանի կողմից Արցախի դեմ նախաձեռնված լայնամասշտաբ պատերազմի ընթացքում, դրան հաջորդած ժամանակահատվածում գերության մեջ հայտնված զինվորական ծառայողի և ձերբակալված քաղաքացիական անձանց, իրավունքի խախտման զոհերի իրավունքների պաշտպանություն՝ միջազգային ատյաններում, այդ թվում՝ դատական: Մեր դիմումների հիման վրա Եվրոպական դատարանը ավելի քան 100 որոշում է կայացրել միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ, որով Ադրբեջանի կառավարությանը պարտավորեցրել է, պահանջել է փաստաթղթավորված տեղեկություն՝ նրանց գերեվարման փաստի, գտնվելու վայրի, պահման պայմանների և բժշկական սպասարկման, նրանց հայրենադարձման վերաբերյալ: Միևնույն ժամանակ 09.03.2021թ Եվրոպական դատարանը մեր դիմումների հիման վրա որոշել է՝ Ադրբեջանի կողմից հայ ռազմագերիների և պահվող քաղաքացիական անձանց իրավունքների ոտնահարումների խնդրի մասին ծանուցել ԵԽ Նախարարների կոմիտեին:

2003թ «Իրավաբաններն ընդդեմ խոշտանգման» իրավապաշտպան հասարակական կազմակերպության անդամ:

2001թ «Տանիք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հասարակական խորհրդի» անդամ:

2011թ «Ամալյա Կոստանյանի անվան մրցանակ». սկզբունքային ու խիզախ գործունեության և քաղաքացիական հասարակության զարգացման գործում նշանակալի ներդրման համար (հավելված 4.6.),

2006թ, 2013թթ «Ոսկե բանալի» մրցանակներ. Տեղեկատվության ազատության մրցանակաբաշխության ժյուրի. տեղեկատվություն ստանալու իրավունքը լավագույնս կիրառած քաղաքացի և տեղեկատվության ազատության խախտված իրավունքի համար ամենահամառ ու հետևողական պայքարող իրավապաշտպան (հավելված 4.7., 4.8.):

---

[5] https://www.facebook.com/RuleofLawNGOArmenia/posts/795516093902454

[6] http://armversion.am/2017/02/14/%D5%A1%D5%BA%D6%80%D5%AB%D5%AC%D5%AB%D5%B6-%D5%A1%D5%A4%D6%80%D5%A2%D5%A5%D5%BB%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%BE%D5%A1%D5%B5%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB/?fbclid=IwAR0pUNvdLnRSljF2fC9MYOod2CqWQhtyS5FcRcFJG9y8GMki02s-mkQv77I

[7] Իրավապաշտպան Սիրանուշ Սահակյանի հետ՝ համատեղ:

2009թ «Պալատի պատվավոր անդամ». ՀՀ փաստաբանների պալատ (հավելված 4.9.):

2014թ «2014թ. համընդհանուր իրավունքների մրցանակ». Հայաստանում արևմտյան մի շարք երկրների դեսպանությունների և ԵԱՀԿ-ի գրասենյակի կողմից. մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում նշանակալից ջանքերի համար (հավելված 4.10.):

2016թ «Տարվա իրավապաշտպան» տիտղոս. Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն (հավելված 4.11.):

2022թ «Ժան-Կլոդ Բարրելի» մրցանակ. Ֆրանսիայի Մոնպելիեի փաստաբանների կոլեգիայի կողմից. մարդու իրավունքների պաշտպանության համար (հավելված 4.12.):

Դատական ներկայացուցչություն սկսել եմ իրականացնել 2001թ վարչական կալանքների վարույթներում, Սահմանադրական դատարանում ներկայացուցչությունը սկսել եմ իրականացնել 2003թ ընտրական վեճերով:

2002թ եթերազրկված անկախ «Ա1+», «Նոյյան Տապան» հեռուստաընկերությունների և նրանց սպառողների իրավունքների պաշտպանություն. այս պաշտպանության ընթացքում հայաստանյան դատարաններում միաժամանակ ներգրավվել եմ 800 սպառողների:

Հեղինակել (համահեղինակ) և իրականացրել եմ տասնյակ նախադեպային դատական ակտերի հիմքում ընկած ստրատեգիական դատավարություններ, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի, ավելի քան՝ 60 որոշումների հիմքում ընկած դիմումներ:

2003թ
ՍԴՈ-424, ՍԴՈ-428, ՍԴՈ-432, ՍԴՈ-435, ՍԴՈ-436,

2006թ
ՍԴՈ-665,

2007թ
ՍԴՈ-703, ՍԴՈ-719,

2008թ
ՍԴՈ-734, ՍԴՈ-736,

2009թ
ՍԴՈ-803, ՍԴՈ-833, ՍԴՈ-844,

2010թ
ՍԴՈ-866, ՍԴՈ-871, ՍԴՈ-872, ՍԴՈ-918, ՍԴՈ-923[8], ՍԴՈ-927,

[8] ՍԴ դիմումը ներկայացվել է Մարդու իրավունքների պաշտպանի միջոցով:

2011թ
ՍԴՈ-932, ՍԴՈ-942, ՍԴՈ-943, ՍԴՈ-984, ՍԴՈ-996,

2012թ
ՍԴՈ-1010, ՍԴՈ-1030, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1063,

2013թ
ՍԴՈ-1074, ՍԴՈ-1099, ՍԴՈ-1114, ՍԴՈ-1121,

2014թ
ՍԴՈ-1142, ՍԴՈ-1157,

2015թ
ՍԴՈ-1192, ՍԴՈ-1224, ՍԴՈ-1227, ՍԴՈ-1234, ՍԴՈ-1238,

2016թ
ՍԴՈ-1254, ՍԴՈ-1256, ՍԴՈ-1257, ՍԴՈ-1263, ՍԴՈ-1270, ՍԴՈ-1271, ՍԴՈ-1275, ՍԴՈ-1282, ՍԴՈ-1315,

2017թ
ՍԴՈ-1340, ՍԴՈ-1383, ՍԴՈ-1384,

2018թ
ՍԴՈ-1399, ՍԴՈ-1427,

2020թ
ՍԴՈ-1559,

2021թ
ՍԴՈ-1583,

2023թ
ՍԴՈ-1699,

2024
ՍԴՈ-1724, ՍԴՈ-1752

Պարզաբանում. Սահմանադրական դատարան ներկայացված գործերի վարումը ընդհանուր իրավասության դատարաններում, գերազանցապես, իրականացրել եմ ինքս: Սահմանադրական դատարանի կողմից վարույթ է ընդունվել հեղինակածս գանգատների, շուրջ՝ 50-80%-ը:

2016թ և 2020թ պատերազմներում 700 և 400 սպանվածների, անհետ կորածների, գերեվարվածների, իրավունքի խախտման այլ զոհերի իրավունքների

պաշտպանության նպատակով գանգատներ Եվրոպական դատարան. գերության մեջ հայտնաբերվել և Հայաստանյան են վերադարձել տասնյակ գերիներ:

Եվրոպական դատարան ներկայացված և ընթացքում գտնվող, ավելի քան՝ 600 գանգատների հեղինակ ու համահեղինակ[9]:

Ադրբեջանի Հանրապետության կողմից Մանվել Սարիբեկյանի, Կարեն Պետրոսյանի, Մամիկոն Խոջոյանի իրավունքների խախտման փաստը հաստատող Եվրոպական դատարանի գործերով շահերի պաշտպան:

Թեև գիտական աստիճան և կոչում չունեմ, սակայն իմ հեղինակած տասնյակ թեզեր հաստատվել, կյանքին են կոչվել և կիրառվում են. դրանք կարող են գնահատվել, որպես առողջապահության, կառավարման, իրավագիտության ոլորտներում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ էական նվաճում:

«Մարդուն օրգանների փոխպատվաստման մասին», «Մարդու վերարտադրողության արհեստական մեթոդների իրականացման մասին», «Արյան, դրա ձևավոր տարրերի դոնորության մասին», «Բնակչության կանխարգելիչ պատվաստումների մասին», «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի, մի շարք գործող օրենքներում («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Լիցենզավորման մասին» և այլն) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության տասնյակ որոշումների («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»; «Դեղերի մասին» ՀՀ օրենքներից՝ բխող), Գերատեսչական նորմատիվ (գրանցված) ակտերի[10], ՀՀ առողջապահության նախարարության բազմաթիվ հրամանների հեղինակ ու համահեղինակ:

Զեկույցների («Human Rights in the OSCE Region: Europe, Central Asia and North America, Report 2004 (Events of 2003); Annualreport on human rights in Armenia for the year of 2004 (2008, 2009, 2010) prepared by Helsinki Association»-ի) հեղինակ ու համահեղինակ:

---

[9] https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-212965%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-200439%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-192087%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-121176%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-201739%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-168830%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-182276%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-182155%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-169756%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-181084%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-179930%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-199347%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-195059%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-173883%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-150495%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-159648%22]}

[10] ՀՀ Առողջապահության նախարարի հրամաներ՝ 07.12.1999թ N 747, 08.12.1999թ N 748 (ՀՀԳՏ 1999.12.30/20(42)), 30.11.2000թ № 681 (ՀՀԳՏ 2000.12.30/21(63)), 27.12.2000թ N 767 (ՀՀԳՏ 2001.04.23/9(72)), 07.03.2001թ N 128 (ՀՀԳՏ 2001.04.23/9(72)) և այլն:

«Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի վճիռների կատարման գործընթացը. Հայաստանում դրանց կատարման խնդիրներն ու առանձնահատկությունները» աշխատության համահեղինակ եմ (Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան, Ա.Գրիգորյան.- Երևան.: Ասողիկ, 2011. 208 էջ[11]):

«Նախադեպային իրավունքն արդարադատության իրականացման գործընթացում հատոր I Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախաձեռնած դատական գործերի վերլուծություն» աշխատության համահեղինակ եմ / Ա. Ղազարյան, Ա. Զեյնալյան, Տ.Մատինյան. – Վանաձոր.: 2011:, 412 էջ[12]:

«ՀՀ սահմանադրական դատարան և մարդու իրավունքների Եվրոպական դատական ներկայացված գրավոր մեկնաբանությունների (amicus curiae)» ժողովածուի համահեղինակ եմ (Գ. Մարգարյան, Ի. Փիլոյան, Ա. Զեյնալյան, Վ. Գրիգորյան, Լ. Սահակյան, Եր. Վարոսյան - Երևան.: Ասողիկ, 2012. 84 էջ):

«Զրպարտության և վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ» աշխատության համահեղինակ եմ / Ա. Ղազարյան, Ա. Զեյնալյան. – Երևան.: «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն, 2012. 53 էջ[13]:

«Զրպարտություն և վիրավորանք» լրագրողների և փաստաբանների համար ձեռնարկի համահեղինակ եմ (Ինֆորմացիայի ազատության կենտրոն, Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան - Երևան.: 2014. 46 էջ)[14]:

«Անվճար իրավաբանական օգնության կառուցակարգերը և պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում. Կարիքների գնահատում» հետազոտության համահեղինակ (Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան - Երևան.: 2015. 76 էջ)[15]:

«Գերակա հանրային շահի հիման վրա գույքի օտարումների արդյունքում խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունները» հետազոտություն (Դ. Ասատրյան, Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան - Երևան.: Իրավունքի Գերակայություն ՀԿ 2021. 146 էջ[16]):

«Արդարադատության ակադեմիայի» ուսումնական մոդուլների հեղինակ, այդ թվում՝ «Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի նախադեպային իրավունքը վարչական գործերով» ուսումնական մոդուլը:

## Որոշ նշանակալի գործերը և արդյունքները

1. Սպառողներն ընդդեմ «Ա1+» և «Նոյյան Տապան» հեռուստաընկերությունների գործով (քաղ. գործ 02-1809) դիմող և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն

[11] https://www.osce.org/files/f/documents/5/0/78232.pdf
[1212] https://drive.google.com/file/d/10BrwNdlaj6_ahJpNpE70XJ0HAL56hLf4/view?usp=drive_link
[13] https://www.osce.org/files/f/documents/2/e/123447.pdf
[14] https://foi.am/books/13304
[15] https://drive.google.com/file/d/1lxniThSafhZ1FwxngynkXk4rQ7kqA-VY/view?usp=drive_link
[16] https://epfarmenia.am/sites/default/files/Document/Opportunities_for_the_restoration_of_mass_and_recurring_violations_of_rights_in_transitional_justice.pdf

պահանջ չներկայացնող շուրջ 800 քաղաքացիների ներկայացուցիչ՝ ընդհանուր իրավասության դատարաններում:

Գործը նախաձեռնվել էր «Ա1+» և «Նոյյան Տապան» հեռուստաընկերությունների 3 հեռուստադիտողների կողմից (որից մեկը Ա. Զեյնալյանն էր), ովքեր վիճարկում էին ազատ հեռուստաընկերություններին եթերազրկելու մասին վարչական ակտերի իրավաչափությունը: Գործով առաջին անգամ 800 այլ սպառողներ ներգրավվեցին որպես կողմ:

2. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի նախագահի և նախագահի տեղակալի գործով (գործ Հ.ՔԳՀ-43/02) ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ներկայացուցիչ ՀՀ դատախազությունում և ՀՀ դատարաններում:

Գործի առիթ է հանդիսացել Ազգային ժողովի պատգամավորների՝ «Հանրապետության Նախագահի Ռոբերտ Քոչարյանին պաշտոնանկ անելու հարցի մասին եզրակացություն ստանալու համար ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին» ԱԺ որոշում ընդունելուն ուղղված նախաձեռնության շուրջ ծագած վեճը: Նախագծ հեղինակները հայտարարում էին, որ ԱԺ նախագահը նախագիծը առանց քվեարկության չի ընդգրկել եռօրյա նիստերի օրակարգում և չի ապահովել հարցի արտահերթ քննարկումը:

3. ՀՀ մշակույթի, երիտասարդության և սպորտի նախարարի վարչական ակտի (խաղաղ հավաքների իրավունքը սահմանափակող՝ քաղ. գործ 2-2689) օրենքին հակասելու գործով դիմողի ներկայացուցիչ ընդհանուր իրավասության դատարաններում:

Այս գործով վիճարկվել է մշակույթի, երիտասարդության և սպորտի նախարար 30.12.2000թ «Համակարգի թատերահանդեսային կազմակերպությունների դահլիճների գործառության մասին» № 542 հրամանի իրավաչափությունը, որով արգելվում է դահլիճներ ունեցող կազմակերպություններին իրենց տարածքները վարձակալության տրամադրել միայն քաղաքական կուսակցություններին իրենց համագումարները (ցանկացած հանդիպում) անցկացնելու համար: № 542 հրամանն ընդունելու իրական դրդապատճառը քաղաքական այլախոհների գործունեությունը սահմանափակելն էր:

4. Արմեն Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի գործով իրավախորհրդատու (գանգատ N 6562/03 A. Mkrtchyan v Armenia):

